

թիւն մը կատարած է, իսկ ուրիշ մ'ալ William Simpson ունի շահեկան գրութիւն մը այս տեղի մասին զոր կը դնենք հոս: Աշխարհի կեդրոն ըսուած տեղը կը կենար յունական եկեղեցիին գմբէթին տակ մոզալիք յատակին վրայ, Ս. Գերեզմանի արեւելքէն քանի մը քայլ հեռու, կազմուած է ամանի մը ձեւով մէկ ոտք 9,25 մատնաչափ բարձր, գագաթին վրայ զըրուած երկրագունդի նման քարով մը, որուն գագաթը կլորակ է, և քարին վրայ նշանակուած են աշխարհի չորս կողմերը: Herr Schick կը նկարագրէ ամանը՝ զոր «բաժակ» կը կոչէ, «Երուսաղէմի յատուկ կարմիր քարէն, երկրագունդը ճերմակ քարէն, նշանները, բեւեռը և կեդրոնի գունդը նոյնպէս ճերմակ քարէ»:

Առաջին վկայութիւնը որ աշխարհի կեդրոնի մասին կը կիրարկուի, սաղմոսին հետեւեալ համարն է. «Աստուած, թագաւոր յառաջ քան զյաւիտեանս, որ արարեր գիւրկութիւն ի մեջ երկրի»: Այս վկայութիւնը մէջբերուած է վերջին գրողներէն իբր բացատրութիւն, որովհետեւ բառերն իրենց յատուկ իմաստը ունին, և աշխարհի կեդրոնի մասին չեն կրնար կիրարկուիլ, ինչպէս ի վերջոյ կը հասկցուի. Երուսաղէմի աշխարհի կեդրոն ըլլալու գաղափարը Գ. դարէն կը սկսի: Յովհաննէս Գրիգոր որ Կարոլոս Ա. ի (742-814) ժամանակ, Սալըզպըրիի եպիսկոպոսին մատակարարն էր, ունի հեղինակութիւն մը, որուն մէջ «Նոյի աղօթքը» վերնագրով գլուխ մը կայ և հեղինակը վկայութիւն կը բերէ Ս. Եփրեմէն (+379)՝ Աստուծոյ քահանային կողմէն Ադամի մարմնոյն պահպանութեան եւ «Երկրի մէջտեղը» անոր թաղուելու մասին: Այն քահանան որ կը կատարէ այդ յուզարկաւորութիւնը 4'ըսուի թէ Մելիսեդեկէ կր. եւ ան Ադամի մարմինը